

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ»,
Կամ Tiflis, Rédaction «Mschak»,
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լինողով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ԲՈՎԱՆԴԱԳՈՒԹԻՒՆ

Կովկասեան ցուցահանդէս.—Ներքին Տե-
սիսթիւն. Բռնի վաճառքներ. Նամակ Թե-
ոսիայից. Նամակ Խմբագրութեան. Նամակ
Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՅԱՔԻՆ
ՏԵՍԻՍԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Ար-
տաքին լուրեր.—Հեռագրի մասին. —ՅԱՅՏԱՐԱ-
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՒՆԿԱՆ. Քրիստո-
նեաներ եւ միաբնակներ:

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՏՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Վերջնականապէս որոշված է, որ Կով-
կասեան ցուցահանդէսի բացումը տեղի
կունենայ սեպտեմբերի 2-ին կիրակի օր:
Ցուցահանդէսը կը յայտարարի բացված
ցուցահանդէսի օգոստոսի 30-ին տեղի ունեցող
Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայիւի:

Ներկայումս ցուցահանդէսի տեղում
մերձայնում են բոլոր նախապատրաստ-
կան գործերը, տեղաւորում են իրերը եւ
կարգադրում են պաշտօնները: Մի քանի
տեղերից դեռ չեն ստացվել իրեր, թէ՛
ստացված են նրանց մասին յայտարարու-
թիւնները: Ցուցահանդէսի վարչութիւնը
որոշել է վերջին զինումը անել եւ դար-
ձնալ արտօնել է մի քանի օր ժամանակա-
միջոց յայտարարութիւններ տալու հա-
մար, այն է, մինչեւ օգոստոսի 20-ը Ռիֆ-
լիս քաղաքում ապրողներին եւ մինչեւ 25-ը
ուրիշ տեղերում ապրողներին համար:—
Թող ջանկարդները օգտվեն այդ արտո-
նութիւնից, շտապեն տալու իրանց յայ-
տարարութիւնները եւ աշխատեն մասնակ-
ցել իրանց արդիւններով:

Ցուցահանդէսում, ինչպէս յայտնի է,
բացի իրերից պէտք է հանդէս բերվեն եւ
կովկասեան ազգերի ներկայացուցիչներ:
Որքան մեզ յայտնի է, այդպիսի ներկա-

յացուցիչներ պէտք է լինեն մեր երկրի
դասնական մասերից՝ Հիւսիսային Կովկա-
սից, Գուրիայի, Թիֆլիսի, Կարսի նա-
հանգներէն եւ պէտք է հանդէս գան ի-
րանց ազգային զգեստներով: Եթէ աւե-
րայնները այդ խմբերին եւ տեղական ազգե-
րի եղանակներէն կազմված կօնցերաները,
այն ժամանակ կը տեսնենք, որ ցուցահա-
նդէսի այցելուին հնարաւորութիւն տուած
կը լինի մի թեթեւ գաղափար կազմել Կով-
կասի ազգագրական մի քանի դժերի մա-
սին: Անկասկած լիակատար ազգագրական
ցուցահանդէս կազմելու համար կարեւոր է
աւելի մանրամասն ծրագիր եւ աւելի լուրջ
կազմակերպութիւն. բայց ներկայ դէպքը
կարող է նախնական մի փորձ ծառայել
ապագայ աւելի կատարեալ ցուցահանդէսի
համար:

Շատ ուրախալի է, որ Կովկասեան տե-
ղական մանր արհեստի կամ անասնադո-
ւուիւնեան բաժնի համար ուղարկված են
բազմաթիւ եւ բազմաթիւ իրեր: Տեղա-
կան արհեստը թէ՛ եւ մի յայտնի մասում
ընկճվում է օտար եւրոպական աւելի կա-
տարեալագործի մարդկանց արդիւնագործու-
թիւնից, բայց մի ուրիշ բաւական խոշոր մասում
պահպանել է գոյութեան ոյժ եւ կարող
է երկար տարիներ կենալ ունենալ, եթէ
մասնաւոր նրա մէջ կը մտնի կատա-
րեալագործութիւններ եւ կը կազմակերպվեն
նրանց վաճառահանութեան համար աւե-
լի նպաստաւոր միջոցներ:

Կովկասի հին արհեստը, եւրոպական
նոր արհեստի հետ միասին, պէտք է տան
կովկասցու ձեռքը դէնք յաղթող հանդի-
սանքում այն ծանր մրցութեան մէջ, որի
մէջ նա նետվել է իր ներկայ կենսով:
Պէտք է որոշել թէ ի՞նչն է հին արհես-
տի մէջ մնալու եւ ձեռնտու եւ թէ ի՞նչ

ձեռք պէտք է ժողովրդական մասսայի մէջ
տարածել նոր արհեստը: Արդեօք կարող
կը լինե՞նք այդ հարցը լուծել ներկայ
ցուցահանդէսի ժամանակ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍԻՍԹԻՒՆ

ԲՈՒՆԻ ՎԱՃԱՌՆԵՐ

Հին-Նախնական գաւառի հայ գիւղերի մէջ
անա տաճարական տարիներ է՝ սովորութիւն
է՝ մտել ընտանիքներով, անով ու տեղով գաղթել
Ռուսաստանի դասնական կողմերը. գաղթելու
պատճառները բազմակողմանի են. մասամբ խո-
րդ տգիտութիւնը, անասնական ձախորդ հան-
գամանքները, իսկ ամենից զլիաւորը շուտ
հարստանալու տենչն է, գիւղական ծանր աշ-
խատանքից փախչելն է եւ օտարութեան ա-
ռաւելութեան վարդապետ երազներն են, որ
գալիս պաշարում են այդպիսիներին:

Մենք ճանաչում ենք հարիւրաւոր ընտա-
նիքներ, որոնք ձգելով ծննդավայրի հողն ու
միջիւրը, իրանց ձեռքի համեստ արհեստները,
գաղթել, գնացել, անհետացել, անյիշատակ կո-
րել են՝ ինչպէս ջրի մի կաթիլ ովկիանոսի
փրփուրն ալիքներին մէջ. գիտենք նոյնպէս շատ
ընտանիքներ, որոնք չը դիմանալով հիւսիսի
ցրտաշունչ քամիներին, ցուրտ ու բորանին,
կորցնելով մասաղ ամուսիններին, անմեղ գա-
ւառիներին, իրանք վերադարձել են հայ ու մաշ
սրտով ու հողով եւ ապրում են թշուառութեան
ու չքաւորութեան մէջ, չը կարողանալով նորից
ձեռք բերել մի անգամ կորցրածը. եղել են
բացառիկ դէպքեր, երբ զանազան մոլթ ու
կեղտոտ միջոցներով գաղթականները «կա-
րգանքներ» անկիւններում, մի քանի կօպէկ դի-
զելու համար, զոհել են իրանց ընտանիքների
պատիւը ամօթաբեր անբարոյականութեան եւ
այսօր պարծենում են որ հարուստ-կապիտա-

լիստ են, ծառաներ ու աղախներ կարող են
պահել, խիստ բարձր են նայում իրանց հա-
րեւան ազգականներին վրա, ծծելով վերջինե-
րի արին ջրփնջով ձեռք բերած վաստակը:

Այդ գաղթականներից շատերը, զոհելով
ցուրտ կլիմային հարաւից գաղթեցրած զաւակ
ու ամուսիններին եւ իրանց խորին տգիտու-
թեան ու կիսավայրենի կենցաղավարութեան
չնորհիւ չը կարողանալով Նոր-Նախնականից
եւ ուրիշ գաղթականներից կենսակիցներ ձա-
րել, վաղուց գալիս են Հին-Նախնական ա-
մուսնանալու համար եւ անա հէնց որ երե-
ւան են գալիս նոր վերաբնակ, օտարած չապիկ
ունեցող, բայց վերականգն ախտերով չաղախ-
ված երիտասարդներ, իսկոյն եւ եթ ընտանիք
մնող ու եղբայրներ վաղուց են այդ գաղթանով
հարուստ կարծեցնալի մօտ ու անմիջապէս
հետուից հետո նշանում են իրանց անարատ
բոյրերին ու դուստրներին, նոյն իսկ հա-
կառակ անպաշտպան թոյլ էակների կամ-
քին. ասենք՝ մնացածում ով է օրիորդի կամ-
քը հարցնում, դա ծայրայեղ յանցանք ու
սրբապղծութիւն է համարվում... Օրիորդի
ընտանիքը մնողը կամ եղբայրը նախ նշան
է վերցնում ու ապա փեսացուին տուն հրաւի-
րում, որին դուռն ձեռքից ձեռի համար կարող
է տեսնել թշուառ հարսնացուն. փեսացուն իր
գործը լաւ գիտէ, նա չաղախված աղտերի մէջ
այն համոզմունքին է, որ ամուսնանալով անողջ
օրիորդի հետ կը բուժվի իր վնասեալ անաս-
նիքի, հետեւաբար նրա համար էլ մի եւ նոյն է
օրիորդը մտաւոր ինչ յատկութիւնների տէր էլ
լինելու լինի... Եւ վայր եկել տարել է այն օ-
րիորդին, որ կը բացառէ անտես անձանակ
փեսացուին կամ կը մերժէ օտարութեան գնալ:

Այս «բռնի վաճառքներ» դեռ պարծանք են
համարվում. դեռ ասում են, թէ է՛տան պրծան
հարսանիքի ծախսերից եւ ապագայի զլխացա-
ւանքներից...

ԲԱՆԱՍԻՒՆԿԱՆ

«ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐ ԵՒ ՄԻԻՍԻՒԻԼԱՆՆԵՐ»

(Նամակ Պարիզից)

Պ. Լուդովիկ դը Կոնտանսոն, «Chrétiens
et Musulmans» գրքին յարգելի հեղինակը հե-
տեւեալ նամակը գրկած է ինձի, «Մշակի» մէջ
հրատարակութեան խնդրանքով:

8 օգոստ. 1901
Ամստերդ (Սոն-է-Լուան)

Պարոն.

«Մշակի» մէջ՝ «Քրիստոնեաներ եւ Միւսուլ-
մաններ» գրքին վրա ձեր հրատարակած յո-
ղուածը ընդունեցայ: Խորապէս զգածուեցայ
գործի վրա ըրած ձեր փափայիլ գնահատում-
ներէն, որոնց համար անկեղծօրէն շնորհակալ
եմ ձեզի:

Այսու հանդերձ, ձեր եզրակացութեանց մէջ
երկու կէտեր կան, որոնց վրա կուզեմ կանգ
առնել:

Առաջինը անձնական պզտիկ վէճ մըն է: Կը-
ռէք, թէ ես կը պատահիմ ֆրանսացիներու
այն խմբին, որ կապուած կը մնայ աւելի ա-
ւանդական, քան ժամանակակից Ֆրանսային:
Իմ գրքիս մէջ ոչինչ կը տեսնեմ, որ թոյլ տայ
վստահ կերպով այդ հաստատումը ընելու ինձի
համար երկու Ֆրանսա չը կայ, այլ միայն մէկ
հատ,—այն Ֆրանսան, որ անընդհատ կը բարե-
շրջուի: Աւանդական Ֆրանսան իր ազնուա-
պետական ուժով 1789-ին անհետացաւ. ա-
սիկա պատմական վերջացած չըլձան մըն է:
Դար մըն է, անոր յաջորդած է բուրժուա ու-
ժիմով Ֆրանսա մը, որ տակաւին կանգուն է
եւ որուն թուականը կը թուի թէ փակուելու
մօտ է: Այժմեան համերայնութեան հասարա-
կական գաղափարներու զարգացումով Ֆրան-
սան երրորդ ուժիմի մը կը դիմէ, ուր գոր-
ծաւորական եւ գիւղատնտեսական ընկերակ-

ցութիւնները գերակշիռ դիրք մը պիտի ունե-
նան: Մէկ խօսքով, անկեալ կը դիմէ հասարա-
կական նոր դիմակի մը, որ այնքան տարբեր է
մեր ապրած արդի բուրժուա ուժիմէն, որքան
այս վերջինը կը տարբերի ազնուապետական
ուժիմէն: Կը տեսնե՞ք թէ Ֆրանսան երկու
թշնամի Ֆրանսաներու բաժնելը յստակ կեր-
պով կը մերժեմ: Գիտե՞մ թէ ոմանք կը սիրեն
այս սխալ հասկացողութիւնը պահպանել, ո-
րովհետեւ անոր մէջ կրօնը հարուածելու մի-
ջոց մը կը գտնեն, զայն ներկայացնելով իրեն-
պաշտպան անցնալի մենաշնորհներուն: Որպէս
թէ կրօնը կառավարութիւններուն քաղաքա-
կան ձեւերուն պատշաճելու համար հարկա-
գրուած ըլլար պզտիկնաւ: Որպէս թէ ան ալ
ենթարկուած չըլլար տեսակ մը բարեշրջու-
թեան. որպէս թէ անիկա ապագային չը կա-
րողանար յարմարիլ հասարակական նոր կարգ
ու սարքի մը՝ ուր ժողովրդական դասակար-
գերու վիճակը բարուրդուած ու նոյն իսկ բո-
լորովին կերպարանափոխուած պիտի ըլլայ:
Ինչո՞ւ համար քրիստոնեայ կրօնը, ըլլայ կա-
թօլիկ, բողոքական կամ լուսաւորական, պի-
տի դադրէր, ապագային, աղքատներուն եւ
անտառանգներուն հասակորդութիւնը վայելել:
Ինչպէս կը վայելէր ասա՞յ: Ամեն պարագայի
մէջ խղճի ազատութիւնը եւ կրօնի ազատ
դաւանութիւնը ներկայ ժամանակներու առաջ-
դիմութեան մաս կը կազմեն, զոր պէտք չէ
արհամարհել:

Երկրորդ կէտը, զոր թողութիւն կը խնդ-
րէի վեր առնել ձեր այնքան բարեխաղամ
յօդուածին մէջ, աս է՝ կը գրէք. «Երբ պ. դը
Կոնտանսոն Ֆրանսական ազգեցու-
թիւնը կը տեսնէ, պէտք է հասկնալ կաթօլիկ
կրօնի տարածումը»:

Խնդրեմ հասցեէք դիմել գրքիս 202-րդ էջը:
Արեւելքի ազգութիւնները ընդունակ են եւ-
րոպական քաղաքակրթութեան՝ ոչ միայն իրենց
դէպի լաւագոյն վիճակ մը ձգտումներով, այլ
որովհետեւ քրիստոնեայ են, այսինքն կազմուած
են մի եւ նոյն հասարակական խմբով. ինչպէս

Եւրոպայի միւս ժողովուրդները: Մի եւ նոյն
տիպով մեզի հաւատարմապէս ազգակից են
հայերը եւ այլն: Արդ՝ հայ ըսելով, կը հաս-
կնում առանց բացատրութեան բոլոր հայերը,
լուսաւորչականները եւ միւսները ու կը տես-
նե՞ք թէ ինչպիսի պարզ դաւանական գործը մը
չեմ վերածել: Հարցը ինձի համար այլապէս
ընդարձակ է. ամենէն առաջ անիկա մարդա-
սիրական է: Միայն թէ քաղաքակրթութեան
զուլը գտնուող ազգերու քրիստոնեայ հիմք
ունենալ չէ կարելի ուրանալ ու իրենց քրիս-
տոնեայ տիպոսին շնորհիւ է որ հայերն ալ
լուսաւորչական թէ յալաքաւան՝ կուզեմ այդ
ազգերու շարքին մէջ տեսնել: Չէ մի որ ա-
նոնք իրեն քրիստոնեայ կարող եղան կան-
գուն մնալ անխախտ՝ Իսլամութեան վիթխարի
ուժին դէմ:

Գալով Ֆրանսական ազգեցութեան, իր գրա-
կանութեան ու իր գաղափարներուն ազգեցու-
թեան, պէտք է ընդունենք թէ անիկա մեր
լեզուին ծաւալուածով միայն կարելի պիտի
ըլլայ: Մեր լեզուին ծաւալուածով միայն մեր
գրականութեան ու մեր գաղափարներուն հա-
մարմնը պիտի աճի: Արդ, ով Ֆրանսական
լեզուն Արեւելքի մէջ կուտուցանէ, եթէ ոչ
կաթօլիկ միսիօնարները: Մեր կառավարող-
ները այդ բանը այնքան լաւ հասկցած են, որ
նոյն իսկ Գամբետտայէն ի վեր որ կըսէ՝ «Լեզ-
րականութիւնը—անա թշնամին», ինչպէս նաեւ
«հակակրթականութիւնը արտահանուած
նիւթ մը չէ», պաշտօնական նպաստները (ըրա-
մական) լայնօրէն տրուած են կաթօլիկ միսիօ-
նարներուն: Ու կառավարական շրջանակներու
մէջ, ուր ազատախոսները բազմաթիւ են, ուղե-
գծի փոփոխութեան հարց չը կայ: Ամեն կարծի-
քի պատկանող Ֆրանսացիներու ստուար մե-
ծամասնութեան հետ, կը խորհել թէ Ֆրան-
սական ազգեցութեան Արեւելքի մէջ աճումը
մեր լեզուին ծաւալումին մէջ կը լայնայնալ
ու թէ կաթօլիկ կրօնի տարածումին մէջ:
Ես երկրին մէջ անձամբ կարող եղայ նկատել
թէ կաթօլիկ դաւանութեան պրօպագանդը

Արեւելքի հասարակութիւններուն համար այն-
քան ալ անարկու չէր եւ թէ անոնց դոյու-
թեան լրջօրէն վտանգ չը կար: Սուրբոյ եւ Թիւր-
քիայի ուրիշ մասերուն մէջ գտնուող կաթօլիկ
վարժարանները այցելելով, տեսայ թէ անոնք
ունէին բազմաթիւ թիւրք եւ ոչ-կաթօլիկ
քրիստոնեայ աշակերտներ: Բէյրութի բժշկա-
կան վարժարանը, զոր ժողովուրդները կը վարեն
Ֆրանսական պետութեան պրօֆէսորներուն եւ
մեր կառավարութեան նիւթական օժանդակու-
թեամբ՝ ամենէն առաջ մարդասիրական գործ
մը չէ:

Ես կը կարծեմ թէ Ֆրանսացի միսիօնարնե-
րու ձեռքով կրթութեան հայ կաթօլիկները համե-
մատաբար մեր լեզուն աւելի մեծ թուով կը
խօսեն քան միւս հայերը ու այս իրողութեան
մէջ ես Ֆրանսայի համար նոր առաւելութիւն
մը կը տեսնեմ: Գալով միւս հայերուն՝ որ
իրենց կրթութիւնը կը ստանան Ամերիկայի
միսիօնարներէն եւ անգլիերէն կը խօսեն, ես
զանոնք հարկաւորաբար Ֆրանսական ազգեցու-
թեան դուռը կը նկատեմ ու ազգային տեսա-
կէտով այդ բանին համար կը ցախիմ միայն:

Ինչ որ սակայն կուզեմ նշանակել, այն ջան-
քերն է, զոր դուք Պարիզ ընտանող ուրիշ երի-
տասարդ հայերու հետ կընէք մեր գրականու-
թիւնը ծանօթացնելու համար ձեր հայրենա-
կիցներուն: Ֆրանսացիները ուրախ միայն
կրնան ըլլալ այդ մասին, պայմանաւ որ դուք
հայերուն ցուցնէիք ոչ թէ գրողներու եւ խոր-
հողներու մասնաւոր դասակարգ մը, այլ մեր
ամբողջ գրականութիւնը եւ մեր դպրոցները
իրենց հակասական գաղափարներու այնքան
յանկուցիչ ու այնքան հրահանգիչ զանազանու-
թեան մէջ:

Գիտեմ թէ «Մշակը» որքան տարածուած է
հայերէն գնահատուած լրագիր մըն է եւ որ-
քան մեծ է իր ազդեցութիւնը: Եթէ համար-
ձակէի յուսալ, որ մէկը այս քանի մը տողերը
հայերէնի թարգմանել յանձն կանէր, ձեր ազ-
նիւ քաղաքակրթութեան պիտի խնդրէի զա-
նոնք հրատարակել: Որովհետեւ ինձի կը թուի

Sh...

